ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մեծավան համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Մեծավան	Ավագանու արտահերթ նիստ	07.05.2020թ.	14-00	**Մեծավանի** համայնքապետարան գ. Մեծավան Զ. Անդրանիկի 2

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020թ. մայիսի 07-ին Մեծավանի համայնքապետարանում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

ժամը՝ 14.00

1. Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի մայիսի 07-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին

զեկ՝ Հ՝ Քաչակուլյան

2. Մեծավան համայնքի բնակիչ հանդիսացող Հայրենական Մեծ պատերազմի վետերան և Ղարաբաղի ազատամարտերում զոհված ազատամարտիկների ընտանիքներին Մեծավան համայնքի բյուջեից դրամական օգնություն հատկացնելու մասին

3՝ Մեծավան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

Զեկ՝ Ա՝ Վարդանյան

4՝ Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

Զեկ՝ Հ՝ Քաչակուլյան

5՝ Լոռու մարզի Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող 06-074-0114-0004 ծածկագրով 1,93784հա մակերեսով հողամասի նվիրատվության մասին

Զեկ՝ Ա՝ Վարդանյան

6՝ Մեծավան համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 7-ի թիվ 14-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին

Զեկ՝ Հ՝ Քաչակուլյան

ՆԱԽԱԳԻԾ 22-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 07-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Հ□ ՔԱՋԱԿՈՒԼՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

Հաստատել Մեծավան համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 07-ի արտահերթ նիստի օրակարգը՝

1. Մեծավան համայնքի ավագանու 2020թվականի մայիսի 07-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Մեծավան համայնքի բնակիչ հանդիսացող Հայրենական Մեծ պատերազմի վետերան և Ղարաբաղի ազատամարտերում զոհված ազատամարտիկների ընտանիքներին Մեծավան համայնքի բյուջեից դրամական օգնություն հատկացնելու մասին

3□ Մեծավան համայնքի բյուջեում փոփոխություն կատարելու մասին

4□ Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին

5□ Լոռու մարզի Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն համարվող 06-074-0114-0004 ծածկագրով 1,93784հա մակերեսով հողամասի նվիրատվության մասին

6□ Մեծավան համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 7-ի թիվ 14-Ա որոշումը անվավեր ճանաչելու մասին

ՆԱԽԱԳԻԾ 23-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆ ԵՎ ՂԱՐԱԲԱՂԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԵՐՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ԴՐԱԿԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18. հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հայրենական Մեծ պատերազմի համայնքաբնակ 1 մասնակցի և Ղարաբաղի ազատամարտերում զոհված ազատամարտիկների ընտանիքներին Մեծավան համայնքի բյուջեից հատկացնել դրամական օգնություն համաձայն հավելվածի:

ՆԱԽԱԳԻԾ 24-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18. 39. հոդվածներով, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33. հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Մեծավան համայնքի 2020թվականի բյուջեի 4251 հոդվածի 05. 02. 01. ծրագրով 3-րդ եռամսյակի համար նախատեսված գումարից 750.0 հազար դրամը տեղափոխել 2-րդ եռամսյակ:

2. Մեծավան համայնքի 2020թվականի բյուջեի 5113 հոդվածի 09. 05. 01. ծրագրով նախատեսված գումարից 8600.0 հազար դրամ գումարը տեղափոխել 4637 հոդվածի 01. 06. 01. ծրագրին:

3. Մեծավան համայնքի 2020թվականի բյուջեի վարչական մասով նախատեսված գումարի հատկացումը ֆոնդային մասին նվազեցնել 8600,0 հազար դրամով:

ՆԱԽԱԳԻԾ 25-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ
ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ*/

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածին, Մեծավան համայնքի ավագանու 2018 թվականի նոյեմբերի 30-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավան համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 46-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝ Մեծավան համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԻԾ 26-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ 06-074-0114-0004 ԾԱԾԿԱԳՐՈՎ 1,93784 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Ա՛ ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թվականի հոկտեմբերի 06-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծավանի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» թիվ 1886-Ն որոշմամբ՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Մեծավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 1,93784 հա մակերեսով հողամասը/ծածկ՝ 06-074-0114-0004/ նվիրատվության կարգով հանձնել Հայաստանի Հանրապետությանը:

ՆԱԽԱԳԻԾ 27-Ա

ՄԵԾԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 14-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. *Ա՛ ՎԱՐԴԱՆՅԱՆ/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38՝ հոդվածով՝ Մեծավան համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

Անվավեր ճանաչել Մեծավան համայնքի ավագանու 2017թվականի հունիսի 6-ի «Մեծավան համայնքի սեփականություն համարվող ՄՏ3-82 մակնիշի տրակտորը համայնքի «Արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին նվիրելու մասին» թիվ 14-Ա որոշումը: